

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

Երեքշաբթի, 8 Օգոստոս.- Սուրբ Երկրի Քրիստոնեայ Հոգեւոր պետերը Երուսաղէմի՝ Հին քաղաքի Դաւթի աշտարակին մէջ հանդիպում ունեցան Երուսաղէմի ոստիկանապետ՝ Տիար Տորոն Տուրճումանի, Երուսաղէմի Հին քաղաքի ոստիկանապետ՝ Տիար Ավի Քոհէնի, Հին քաղաքի ոստիկանատան քրիստոնեաներու բաժնի պատասխանատու սպայ՝ Տիար Ալա Հարպի հետ:

Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան կողմէ ներկայ գտնուեցան Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Դարիպեան եւ Դիւանապետ՝ Տ. Աղան Աբղ. Գոգչեան:

Հանդիպման ընթացքին Հոգեւոր պետերը ոստիկանապետի ուշադրութեան յանձնեցին իրենց համայնքներուն յուզող բոլոր խնդիրները, յատկապէս անդրադարձ եղաւ քրիստոնեաներու հանդէպ Հրեայ ծայրայեղականներու թնկելու, անոնց դրսեւորած յարձակողական ոտնձգութիւններու խնդրին, ինչպէս նաեւ Զատկական Լոյսի օրուայ արարողութեանց խաղաղ ընթացքն ապահովելու կազմակերպման հարցերուն:

Երկուշաբթի, 21 Օգոստոս.- Նիւ Եորքի քաղաքապետ՝ Տիար էրիկ Ադամս պաշտօնական այցով Ժամանեց Իսրայէլ: Երուսաղէմի մէջ տեղի ունեցած բարի գալուստի ընդունելութեան, Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան կողմէ ներկայ գտնուեցաւ եւ յանուն քրիստոնեայ բոլոր համայնքներու խօսք առաւ Սուրբ Աթոռոյս Դիւանապետ՝ Տ. Աղան Աբղ. Գոգչեան:

Երկուշաբթի, 28 Օգոստոս.- Իսրայէլի Ներքին Գործոց Նախարարութեան Փոքրամասնութիւններու վարչութեան նորանշանակ պետ՝ Տիար էյադ Սարխան, ընկերակցութեամբ նոյն վարչութեան Քրիստոնէական համայնքներու բաժնի վարիչ՝ Տիար Սեզար Մարճիէի, իր պաշտօնը ստանձնելուն առիթով այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի հետ:

Երկուշաբթի, 6 Նոյեմբեր.- Երեկոյեան ժամը 4-ին, Ֆրանսայի նորանշանակ Ընդհանուր Հիւպա-

տոս՝ Տիար Նիկոլաս Գասիանիդէս կատարեց իր առաջին պաշտօնական այցը Հայոց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեան Պատրիարք Սըրբազան Հօր հետ:

Հանդիպման ընթացքին Նորին Ամենապատուութիւնը շնորհաւորեց Տիար Գասիանիդէսի իր պաշտօնի նշանակման համար եւ յաջողութիւն մաղթեց անոր: Անդրադարձ եղաւ նաեւ «Կովերու պարտէզ»-ին եւ նախօրէին տեղի ունեցած միջադէպին:

Երեքշաբթի, 14 Նոյեմբեր.- Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօներուն ընդառաջ, Գուշ Հացիոնի զինուորապետ՝ Տիար Նապիլ Թաֆէշ ընկերակցութեամբ Իսրայէլի Ներքին գործոց նախարարութեան քրիստոնեաներու բաժնի վարիչ՝ Տիար Սէզար Մարճիէի, եւ Հին քաղաքի ոստիկանատան քրիստոնեաներու բաժնի պատասխանատու սպայ՝ Տիար Ալա Հարպի այցելեցին Պատրիարքարան եւ հանդիպում ունեցան Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի հետ:

Հանդիպման ընթացքին քննարկուեցան այս տարուայ Ս. Ծննդեան տօներուն վերաբերող արարողակարգային հարցեր:

Հանդիպմանը ներկայ էին նաեւ Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան, Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեան եւ Դիւանապետ՝ Տ. Աղան Աբղ. Գոգչեան:

Հինգշաբթի, 30 Նոյեմբեր.- Կէսօրէ ետք ժամը 4-ին, Ռամալլայի մէջ Յունգարիոյ ներկայացուցչութեան ղեկավար՝ Դոկտ. Ռիթա Հերենցսար այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Նորին Ամենապատուութիւն Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի հետ:

Հինգշաբթի, 21 Դեկտեմբեր.- Ամանորի եւ Ս. Ծննդեան տօներու առիթով Իսրայէլի նախագահ՝ Վսեմաշուք Տիար Իսահակ Հերցոկի կողմէ կազմակերպուած ընդունելութեան Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան կողմէ ներկայ գտնուեցաւ Տ.

Կորիւն Եպս. Բաղդասարեան: Իր խօսքին մէջ Նորին Վսեմութիւնը շնորհաւորեց Սուրբ Երկրի բոլոր քրիստոնեայ համայնքներու հոգեւոր պետերուն Ամանորը եւ գալիք Սուրբ Ծնունդը:

Չորեքշաբթի, 27 Դեկտեմբեր.- Կաթողիկ եւ Բողոքական եկեղեցիներու Ս. Ծննդեան տօնի առիթով, Երուսաղէմի մէջ սկսան շնորհաւորութիւնները: Առաւօտեան ժամը 9:45-ին, Սրբոց

Յակոբեանց Միաբանութիւնը Ս. Աթոռոյս Լուսարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեանի գլխաւորութեամբ շնորհաւորութեան գնաց Ս. Երկրի Քիւսթոտ՝ Հայր Ֆրանչեսկո Փաթոնի եւ Ֆրանչիսկեան Միաբանութեան, ապա ժամը 10:30-ին՝ Լատինաց Պատրիարք Ամենապատիւ Տ. Փիերպաթրիսթա Արք. Փիցաբալային եւ Միաբանութեան:

Պատրաստեց՝ ՆԵՐՍԵՏ ԱՔԵՂԱՅ ԱԼՈՅԵԱՆ

